

## Եվրոպայում. Եվրոյի գոտիում գրանցվել է ամենամեծ գևաճը վերջին 10 տարվա ընթացքում

Արմինե Հակոբյան, «Գլոբալ Էս-Փի-Սի» գլխավոր տնօրեն

Եվրոյի գոտիում փետրվարի ավարտին գրանցվել գևաճի էական թռիչք տարեկան հաշվարկով մինչև 3.3%: Այս մասին մարտի 14-ին հայտարարեց Եվրոմիության վիճակագրական ծառայությունը՝ Եվրոստատը:

Այն նշում է, որ գների աճը առաջին հերթին պայմանավորված է ավտոտրանսպորտի վառելիքի, ինչպես նաև հիմնական սննդամթերքի՝ հացի և կաթի գների աճով:

3.3% գևաճի մակարդակը հանդիսանում է ամենամեծ տարեկան գևաճը վերջին 10 տարվա ընթացքում:

Հրապարակված տվյալները հանդիսանում են ամենաանհանգստացնող ազդանշանը Եվրոպական կենտրոնական բանկի (ԵԿԲ) համար, որը եվրոգոտու երկրների կառավարության հանդեպ ստանձնել է պարտավորություն պահպանել ոչ ավելին քան տարեկան 2% գևաճի մակարդակ: Արդյունքում ԵԿԲ մոտ կրճատվում են եվրոյով հաշվարկային բանկային տոկոսադրույքի նվազեցման հնարավորությունները, քանի որ այն կարող է դրդել գևաճի հետագա աճի, նշում է ԻՏԱՐ-SԱՍՍ-ը:

Եվրոյի փոխարժեքի ռեկորդային մակարդակը՝ նավթի վերանբարձ գների և ֆինանսական շուկաների անկայունության հետ մեկտեղ կարող են խաթարել եվրոգոտու տնտեսության աճը, սակայն Եվրոպական կենտրոնական բանկին ուղղված տոկոսադրույքի նվազեցման կոչեր դեռ չեն հնչել:

Վերջերս ԵԿԲ պաշտոնյաները բացառել էին բազային տոկոսադրույքի նվազեցման հնարավորությունը 4%-ից ավելի ցածր արժեքի, նշելով, որ Եվրոպական տնտեսությունը բավականաչափ ուժեղ է և չի պահանջում լրացուցիչ խթանում: Սակայն նրանք զգուշացրեցին, որ գևաճը ընթացիկ տարում կգերազանցի ԵԿԲ կողմից սահմանված 2%-ի նպատակային մակարդակը:

Եվրոյի փոխարժեքի ամրապնդումը սպառնում է Եվրոպական տնտեսությանը, հայտարարեց ԵԿԲ նախագահ Ժան-Կլոդ Տրիշեն Բոյուսելում կայացած ԵՄ անդամ-երկրների ֆինանսների նախարարների հետ խորհրդակցության ժամանակ:

Ներկայումս կարևոր է, որ ԱՄՆ ամրապնդի դոլարի փոխարժեքը, քանի որ վերջինիս անկման պատճառով Եվրոյի փոխարժեքը գերազանցել է պատմական մաքսիմումը, ինչը վնասում է Եվրոպական արտադրողներին, կարծում է Տրիշեն:

Ըստ Ֆրանսիայի ֆինանսների նախարարության ղեկավար Զրիստինա Լագարդի, Եվրոպական արժույթը հատեց 1.5 դոլարի խորհրդանշական շեմը, ինչը ցանկալի չէ Եվրոմիության համար:

«Ուժեղ» եվրոն ձեռնտու չէ Եվրոպական երկրների համար, քանի որ «թուլացող» դոլարի պայմաններում իրենց արտադրանքը կորցնում է իր մրցունակությունը:

